

**ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՊՐԱԳՄԱՏԻՎ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼԻ
ՌԻՍԿԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՂՈՒՄ
(ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Գ.Մ Կարապետյան, Ա.Գ Կարապետյան
Kartimat.74@mail.ru

Հանգուցային բառեր-Կոնստրակտիվ աշխարհագրություն, ռացիոնալ բնօգտագործում, ռեսուրսի օգտագործման ռիսկ, ռիսկի գնահատում, ռիսկի կանխատեսում, ռիսկի կառավարում:

Կոնստրակտիվ աշխարհագրությունը, ինչպես ցույց են տալիս վերջին տասնամյակներում մեր կողմից կատարված բնական հետազոտությունները և այդ ոլորտի վերաբերյալ հրապարակումների համապարփակ վերլուծությունը, այն գիտություն է տեխնոսֆերայի ձևավորման ու տարբեր բնատեխնածին գեոհամակարգերում բնակչության տնտեսական գործունեության համար ռացիոնալ մեթոդիկայի և սկզբունքների մշակման ու դրանց գործնական կիրառման վերաբերյալ: Բնական հետազոտությունների այս ուղղությունը համարվելով նոր ու երիտասարդ, անշուշտ, դեռևս կարիք ունի լրամշակումների, հատկապես դրանցից ստացված գիտատեսական դրույթների հիմնավորումների, օգտագործման բնույթի, հավաստիության և կիրառական ոլորտների հստակեցման: <<Կոնստրուկտիվ աշխարհագրություն>> տերմինը մասնագիտական գրականության մեջ օգտագործվել է անցյալ դարի 80-ական թվականների վերջում [6]: Այդ թվականներին բնատեխնածին համակարգերում շրջակա միջավայրի նպատակաուղղված փոփոխությունների համար կատարվող աշխարհագրական հետազոտությունները մասամբ անվանվում էին նաև <<ինժեներական աշխարհագրություն>> [2]: Սակայն անկախ այդ անվանակոչումներից , մեր հաստատ համոզմամբ, <<Կոնստրուկտիվ աշխարհագրությունը>> պետք է հնարավորինս ճիշտ ուսումնասիրի և գնահատի ինժեներատեխնիկական համակարգերի և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների ու միջոցների ստեղծման, այնպես էլ օգտագործման , այսինքն հետագա շահագործման ընթացքում բնական միջավայրի զարգացման վրա դրանց թողած բացասական ազդեցության հետևանքների գնահատման կանխատեսման ու կառավարման հիմնախնդիրները: Այդ ամենը պետք է կատարվի ինչպես ներկայի , այնպես էլ մոտ ու հեռավոր ապագաների համատեքստում: Իսկ դրա համար անկերև է, որ կոնստրուկտիվ աշխարհագրական հետազոտությունները պետք է լինեն ինչպես համալիրային, այնպես էլ բաղադրամասային , այլ կերպ ասած, ունենան համադրական հետազոտությունների գիտատեսական ուղղություններ ու այդ խնդիրների լուծման համար ցուցաբերեն երկու հիմնական մոտեցումներ:

1. Գեոհամակարգերի բնական բաղադրամասերի համալիրային հետազոտության և մարդու տնտեսական գործունեության վրա դրանց հակազդեցության բացահայտման կոնտեքստում:

2. Շրջակա միջավայրի բնականոն իրադրության մարդածին փոփոխությունների մասին մասին գիտելիքների հավաքացրման , դրանց վերլուծության ու համադրման , ինչպես նաև շրջակա միջավայրի բաղադրամասերի հետ բնակչության արտադրական ակտիվ շփումների և բնատեխնոլոգիական համալիրների գործունեության ընթացքում անցանկալի փոփոխությունների հնարավոր կանխատեսման ու կառավարման մոտեցումներով:

Նման բնույթի հետազոտություններով վերջերս մասնակիորեն զբաղվել են գեոմորֆոլոգիական գիտության ինժեներական գեոմորֆոլոգիայի առանձին ուղղություններ, ինչպես օրինակ ինժեներական լճաբանությունը, երկրաբանական գեոդինամիկան, աշխարհագրական բնույթի որոշ ուղղություններ և այլն [3]:

Մեր կարծիքով, նման բնույթի հետազոտությունների ժամանակ դրանց հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի «Կոնստրուկտիվ աշխարհագրությունը» ևս, որի հիմնական նպատակը պետք է համարվի օբյեկտիվ իրականություն, այսինքն բնական միջավայրի ժամանակակից վիճակի և զարգացման միտումի գնահատումը, դրանց պոտենցիալի ու փոփոխությունների նկատմամբ կարևոր բաղադրամասերի դիմադրողականության բացահայտումը ինչպես նաև աշխարհագրական փորձասությունը (կառուցվող օբյեկտի նպատակահարմարությունը և հնարավորության հաստատումը որը պետք է իրականացնել բնակչության հարցումների միջոցով): Այդ համատեքստում կարևոր է նաև բնական էկոլոգիական հավասարակշռության պահպանումը, որպես նորմալ կենսագործունեության միջավայրի, ինչպես նաև աշխարհագրական կանխատեսումը, այսինքն նոր նախագծվող օբյեկտների ու շրջակա միջավայրի զարգացման միտումի կանխատեսման ու դրա կառավարման համար խորհրդատվության նախապատրաստումը: Այստեղից հետևում է, որ կառուցողական աշխարհագրության պրագմատիկ նպատակներից մեկը պետք է համարվի նաև բնական միջավայրի կարևոր ու զգայուն բաղադրամասերի ու տարբեր տիպի ինժեներական կառույցների անվտանգ փոխներգործության, դրանց համատեղ զարգացումների ապահովման վերաբերյալ հանձնարարականների ուսումնասիրությունները ստացված գիտական արդյունքների հիման վրա անհրաժեշտ եզրահանգումներ կատարելը [7]: Այս համատեքստում պակաս կարևոր չեն նաև մարդու տնտեսական գործունեության, «ինժեներական կառույցներ», «շրջակա միջավայր», համակարգերում փոխադարձ կապերի լավագույն հաշվարկներն ապահովելու համար փաստաթղթերի ճիշտ կազմումը և դրանց գիտականորեն հիմնավորումները: Ըստ երևույթին դրանով է պայմանավորված նաև այն, որ կոնստրուկտիվ աշխարհագրությունը աշխարհագրական հետազոտությունների հատուկ այն ուղղությունը պետք է համարվի, որը կբացահայտի ինժեներական կառույցների և աշխարհագրական միջավայրի կարևոր բաղադրամասերի փոխազդեցության, ու առաջինների

ներգործության աստիճանը շրջակա միջավայրի և հարաբերականը կայունության վրա:

Անշուշտ այստեղ անհրաժեշտ է բացահայտել հակառակը, այն է, տարբեր պրոցեսների և երևույթների (երկրաշարժ, սողանք, փլուզում, ձորակառաջացում, կարստ, սուֆեզիա, և այլն) ազդեցությունը տեխնիկական կառույցների կայունության, ինչպես նաև բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության պահպանման, դրանց լարվածության ավելացման կամ պակասեցման ու այլ փոփոխությունների վրա: Ակներև է, որ շատ կարևոր են նաև սոցիալ-տնտեսական պատվերները տվյալ համատեքստում: Կարևոր պատվեր պետք է համարել նաև լեռնային բնատեխնածին տարածաշրջանների տնտեսական պլանավորման և դրանցում առկա բնական ռեսուրսների <<ընդունելի ռիսկերով>> օգտագործման հիմնախնդիրների բացահայտման և գնահատման աշխատանքները:

Կոնստրուկտիվ աշխարհագրական նպատակներով որևէ գեոհամակարգի հետազոտությունների ժամանակ անհրաժեշտ է նաև մասնագիտական (հատուկ այդ նպատակների համար կազմվող) համադիրային (սինթետիկ) քարտեզների վրա արտահայտել ինժեներա-աշխարհագրական այն հիմքերը, որոնք մեր հաստատ համոզմամբ, պետք է լուծեն հետևյալ կարևոր խնդիրները:

ա. Նախագծվող ածխատանքի, այսինքն կառույցի կամ բնական որևէ այլ ռեսուրսի օգտագործումը պետք է հարմարեցվի տվյալ գեոհամակարգի բնական համեմատաբար կայուն պայմաններին հատկապես ռելիեֆի ծագումնաբանական և ձևաբանական տիպի, այնտեղ տարածված հիմնական գրունտների և ապարատեսակների, ինչպես նաև տեղական միկրոկլիմայական պայմանների հետ:

բ. Նախագծվող միջոցառման, այսինքն կառույցի պահպանումը վտանգավոր երևույթներից, ինչպես օրինակ երկրաշարժերից, արտակարգ ջերմաստիճաններից, մերկասառույցից, սելավներից, սողանքներից և այլ բացասական երևույթներից ու պրոցեսներից:

գ. Բնական միջավայրի զարգացման վրա տվյալ կառույցի հնարավոր վնասակար ներգործության կանխատեսումը և դրա դեմ պայքարի միջոցառումների մշակումը [5]:

Վերջին 45-50, տարիների ընթացքում ՀՀ գրեթե բոլոր ֆիզիկաաշխարհագրական ռեգիոններում մեր կողմից կատարված հետազոտությունների փորձը ցույց է տալիս, որ լեռնային բնատեխնածին տարածաշրջանների կոնստրուկտիվ աշխարհագրական ասպեկտները կարելի է բնութագրել մի քանի չափորոշիչներով, որոնք կարող են արտահայտվել ինենց ֆիզիկական մեծություններով, բարդությամբ, որակական ու քանակական համապատասխան հատկանիշներով, ինչպես նաև այլ բնութագրիչներով:

Բնատեխնածին գեոհամակարգերի ռելիեֆի հատկապես լեռնային բնույթը, բարդ երկրաբանական կառուցվածքները խայտաբղետ ապարակազմությունը, տարբեր միկրոկլիմայական պայմանները ինենց որոշակի ազդեցությունն են թողնում այդ համակարգերի ձևավորման և զարգացման միտումի վրա: Ընտ բարձրության

օրինաչափորեն փոփոխվող լանդշաֆտային բոլոր բաղադրամասերը զգալի փոփոխություններից են պայմանավորում: նաև սոցիալ –տնտեսական ոչ պակաս կարևոր մի շարք բաղադրամասերի զարգացման մեջ, ինչպես օրինակ բնակչության տարաբնակեցումը, արտադրական օբյեկտների վերա տեղաբաշխումը, հաղորդակցության միջոցների վերակառուցումները և այլն: Այլ կերպ ասած, այդ ամենը պատճառ է դառնում նաև տարածաշրջանների տնտեսության բազմաճյուղայնությունը, որոնք որոշիչ են հատկապես գյուղատնտեսության մասնագիտացման ու դրա գոտիական տեղաբաշխման համար: Հայտնի է նաև այն, որ լեռնալանջերի մեծ թեքությունները իջեցնում են հողագործության տնտեսական էֆեկտիվությունը, որոնք ինենց հերթին ազդում են բնակչության բնական և մեխանիկական անհամաչափ աճելու վրա և ոչ հավասարապես ավելացնում մարդածին ծանրաբեռնվածությունը այդ տարածաշրջանների տարբեր մասերի վրա: Ամենափայլուն օրինակ կարելի է համարել Տավուշի մարզում Աղստևի հովիտը, Լոռու մարզում Դեբեդի հովիտը, որոնք ըստ էության, համարվում են ՀՀ հիմնական <<փողոցները>>, որոնք բարդ լեռնային այդ համակարգերում համարվում են ՀՀ հիմնական <<փողոցները>> արտաքին աշխարհի հետ կապվելու համատեքստում:

Կոնստրուկտիվ աշխարհագրական պրագմատիկ հետազոտությունները պահանջված են այն համատեքստում որ չնայած գիտատեխնիկական ժամանակակից առաջնագի և անվտանգության ապահովման համար կիրառվող զգալի միջոցառումներին, այնուհանդերձ, տարերային աղետներից կրած նյութական վնասները մեր հանրապետությունում անընդհատ աճում են: Օրինակ մեկ տարվա 2003-2004թթ ընթացքում միայն գետերի վարարումների պատճառով հանրապետության տնտեսությունը ընդհանուր հաշվով պատճառվել է 1 մլրդ. 411 մլն. 790 հազար դրամի վնաս: Վերջին 15 տարիների ընթացքում 22 տեղի է ունեցել մոտ 70 հզոր սելավներ: Պակաս վնասներ չեն պատճառում նաև հաճախ կրկնվող երաշտները և կարկտահարությունը: Միայն 2015թ կարկտահարության պատճառով մոտ 20 գյուղական համայնքներում ոչնչացել է ցորենի, տարեկանի, կարտոֆիլի և այլ մշակաբույսերի բերքի ավելի քան 70-80 տոկոսը [3]: Մեծ չափերի են հասնում նաև ծանրահակ երևույթների հետևանքով առաջացած վնասները: Ներկայումս հանրապետության տարածքի վրա մեր կողմից առանձնացվել ու տարբեր մասշտաբներով հետազոտվել ու քարտեզագրվել են ավելի քան 700 սողանքային մարմիններ: Միայն ֆիոլետովո-Դիլիջան-Իջևան երկաթագծի ընդհանուր 48 կմ երկարության հատվածի վրա ակտիվ գործում ու ավելի քան 100 սողանքային մարմիններ, որոնք վտանգավոր են դարձրել երկաթուղագծի մոտ 30 կմ երկարությամբ հատվածը [4]:

Բնական ու տեխնածին բացասական այդ երևույթների անընդհատ աճման հիմնական պատճառների մի մասը պայմանավորված է ինչպես դրանց բնական զարգացման ընդհանուր ակտիվացմամբ այնպես էլ լեռնային բնատեխնածին գեոհամակարգերում մարդու ավելի ու ավելի բազմաբնույթ և լայնամասշտաբ տնտեսական գործունեության հետ:

Բացասական բազմաթիվ երևույթներից և պրոցեսներից հնարավորինս խուսափելու և դրանց վնասակար հետևանքները նվազեցնելու համար անհրաժեշտ է ոչ միայն փաստագրել, այսինքն գնալ կատարված փաստերի հետևից ու արձանագրել այդ երևույթների անցանկալի արտահայտություններն ու պատճառած վնասները, այլև անցում կատարել նոր ռազմավարության՝ մշակել և կիրառել գիտականորեն հիմնավորված բնատարածքի օգտագործման արդյունավետ ձևեր և եղանակներ: Դրանք պետք է հիմնված լինեն բնական ու մարդածին բացասական երևույթների դաշտային հետազոտությունների միջոցով ստացված տեղեկատվության գնահատման, կանխատեսման ու հնարավորինս կառավարման սկզբունքի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարապետյան Գ.Մ. և ուրշներ, ՀՀ գեոմորֆոլոգիական, Հայկ. ՍՍՀ ԳԱ. հրատ. Երևան 1986թ, 237 էջ
2. Վ.Ռ. Բոյնագրյան Ռ.Խ Գագինյան, Լեռնային երկրների ինժեներական աշխարհագրություն, ԵՊՀ հրատ. Երևան, 2005թ, էջ 69
3. Ա.Կարապետյան, Գ.Կարապետյան, Լեռնային տարածքների տնտեսական օգտագործման ռիսկերի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ Լոռվա և Տավուշի տարածաշրջանների օրինակով) Լիմուշ հրատ Երևան, 2013թ, 155 էջ
4. Գ.Մ Կարապետյան Իջևան-Դիլիջան-Հրազդան երկաթուղագծի շահագործման հուսալիության մի քանի հարցերի մասին :ՀՊՄՀ պրոֆ. դաս. կազմի 45-րդ գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 1990թ, էջ 24-26
5. Գ.Մ Կարապետյան, Լեռնային բնատարածքի տնտեսական օգտագործման ռիսկի կանխատեսման մի քանի արդյունքների մասին, ՀՊՄՀ գիտական աշխատանքների ժողովածու, Երևան, 2003թ, էջ 145-149
6. Г М Карапетян К методике прогнозирования влияния проектируемых водохранилищ на изменений окружающей среды. Ученые Записки ,ЕГУ №3 Ереван,1983 стр 130-136
7. И.П Герасимов, Конструктивная география, Москва 1996г, стр 144 .